

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Տնտեսական հարց:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բագուց: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՎՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑ

Վերջին ժամանակները տեղիս ունի «ԲԱՅԿԱՅԵ» լրագիրը նուիրել է մի շարք առաջնորդող յօդուածներին անտեսական հարցին կողմասում:

Ռուս լրագիրը այն միտքն է յայտնում թէ ժամանակ է արդէն որ մենք մեր կապիտալները գործ դնենք արդիւնագործութեան վրա: Քննելով այն գլխաւոր տարրերը, որոնք կազմում են մեր երկրի ազգաբնակչութիւնը, լրագիրը համոզւում է հետեւեալ եզրակացութեան: Ռուսները մեր երկրում մեծ մասամբ արքունի ծառայութեան պաշտօնականներ են, կապիտալիստներ չեն, ուրեմն չէ կարելի նրանցից պահանջել որ նրանք զբաղվեն որ և է արդիւնագործութեամբ: Վերջինները իրանց պատմական հանգամանքների շնորհով նոյնպէս զբաղմունքներ չեն մեր երկրի մէջ և առհասարակ մեծ ընդունակութիւն էլ չեն ցոյց տալիս դէպի այլ և այլ արդիւնագործական պարապմունքներ: Մնում են ուրեմն հայեր, որոնք հարուստ են, նրանք թէ կապիտալիստներ են և թէ կալուածատէրեր: Եւ ահա ունի «կապիտալ» լրագիրը մեղադրում է հայերին, թէ նրանք բոլոր միջոցներ ունենալով, ամենաազոյ հանգամանքների մէջ զբաղւած լինելով, փոխանակ մեր երկրի մէջ արդիւնագործական գործը իրանց ձեռքն առնելու և առաջ տանելու,—զբաղվում են միմիայն այն սպանիչ պարապմունքով, որին վաճառականութիւն են անուանում: Առաւօտից մինչև դիշերը խնամելով անգործ նստել, սպասելով մուշտարիներին,—

ահա մարդկային արժանաւորութիւնը ստորացնող մի պարապմունք, քանի որ այդ միջոցին մարդու ոչ ֆիզիկական ոյժերն են որ և է գործ կատարում, ոչ էլ նրա մտաւոր կարողութիւնը որ և է վարժութիւն ունի: Եւ ճշմարիտ, վաճառականութեան մէջ մարդը հասնում է կատարելապէս զինուորական, իր ամբողջ կենքերում նա ոչ իր ֆիզիկական, ոչ էլ իր մտաւոր ոյժերն է գործածում որ և է աշխատանքի համար: Նրա բոլոր մարդկային բնական կարողութիւնները մնում են քնած, անգործադրելի դրութեան մէջ:

Համեմատեցէք վաճառականի հետ գործարանատիրոջ, կալուածատիրոջ, առհասարակ արդիւնագործին կամ գիւղատնտեսին: Նրանք բոլորն էլ միշտ տենդային դրութեան մէջ են, անում են այլ և այլ կօմբինացիաներ այս կամ այն նոր ձեռնարկութիւնն իրագործելու համար, մի և նոյն ժամանակ, նրանց ուղեղը միշտ բանում է, այլ և այլ հնարազարդութիւնների վարժվելով, և բացի սրանից արդիւնագործի, մանաւանդ գիւղատնտեսի ֆիզիկական ոյժերն էլ անգործ, քնած դրութեան մէջ չեն մընում: Նրանք միշտ շարժման մէջն են գտնվում:

«ԲԱՅԿԱՅԵ» լրագիրը այն եզրակացութեան է համոզւում որ միակ տարրը մեր երկրում, որից կարելի էր սպասել թէ նա կը զբաղվի ամեն տեսակ արդիւնագործութեամբ, հայերն են, քանի որ նրանց ձեռքումն է երկրի ամբողջ անտեսական ոյժը, նրանք են տիրում մեր երկրի բոլոր թէքազաքային և թէ գիւղական մեծ կալուածներին վրա, նրանց ձեռքումն են կապիտալները, բայց մի և նոյն ժամանակ լրագիրը ունի յայտնում չունի հայերից, հաւատացած լինելով որ վաճառականութիւնը, առեւտրական պարապմունքը սպանիչ սովորութիւնը սպառնէ հայերի մէջ ձեռնարկողական ոգին: Այդպիսով ունի լրագիրը մեր երկրի արդիւն-

ագործութեանն ու արդիւնագործութեան գարի տալը սպասում է միմիայն օտարերկրեայ կապիտալիստներից և ցանկանում է շուտով նրանց տեսնել մեր երկրում, որպէս զի նրանք, վերջապէս, ձեռնարկեն կապիտալ և կ'արդիւնագործութեանը:

Ռուս «ԲԱՅԿԱՅԵ» լրագրի մտքերից շատերը շատ ճիշդ են, անտարակոյս: Մենք էլ վաճառականութեան մեծ պաշտոններից երբէք չենք եղել և այդ շատ լաւ յիշում են մեր ընթերցողները: Մենք էլ շատ անգամ ասել ու քարոզել ենք հայերին, որ ժամանակ է սկսել պարապել արհեստներիով, գիւղատնտեսութեամբ և արդիւնագործութեամբ:

Բայց կան պատճառներ որ հայը մինչև այժմ չը կարողացաւ կատարելապէս իրան նուիրել երկրագործութեանն ու գիւղատնտեսութեանը, կամ արհեստներին և արդիւնագործութեանը: Այդ պատճառները մենք կը քննենք մի այլ անգամ:

Բացի սրանից մի քանի տարի առաջ մենք գրել էինք նոյն մտքերն ենք յայտնել ինչ որ «ԲԱՅԿԱՅԵ» լրագիրը նոր է յայտնում, բայց այն ժամանակ մենք և այն միտք էինք յայտնում թէ ուղղակի սկսել մի երկրի մէջ ֆաբրիկային արդիւնագործութիւնը, երբ դեռ ևս մշակված չեն երկրի հարստութիւնները, պակաս են առաջնակարգ ապրանքները, matières premières, որոնք ամեն ֆաբրիկայից համար պէտք է որպէս օժտանդակ ներթեր ծառայեն,—կարճատեսութիւն է, եթէ չասենք անմտութիւն:

Այդ հարցերին մենք դեռ ևս շատ անգամ կը վերադառնանք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՎՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 9-ին

Մի տարուց աւելի է, որ իմ ոչ մի չափ, աչ-

ԲԱՆԱՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ

Կ. Պոլսի, 12 փետրվարի

Ներքին սրբազանի վրայ ևս երկար խօսելու հարկ չկայ: Գործէ հետեւ պատիւ ունի թիֆլիսցի «Մշակ»-ի շատ և շատ սովորական ծանօթացնել ձեզ սրբազանը զանազան եղանակներով: Որչափ որ Ներքին սրբազան նկատուած է իր կիս-վստուած մը, բայց և այնպէս չը վարանցանք երբեք ցոյց տալ սրբազանի թերի կողմերը: Երբ և որ այդ թերութիւնները չունենան և է մեծ կարեւորութիւն, բայց ինչ ընել. թող թափել մը նման ի լուսանկարչի. նա չէ կարող զգալ ձեռքի հանել, չուզածները ձգել:—Հայ ազգը ճանաչում է Ներքին Սրբազանը հայրենասէր եկեղեցական մը, արի պաշտպան ազգային ամէն տեսակ շահուց, միանգամայն կարող պաշտպանել այդ շահերը: Ունի մարդկային սրտի ամենն մեծ և ամբողջ զգացումներն, միւս, փառասիրութիւն: Ներքին սրբազանը իր փառքը կը փնտռէ ազգին վրայ տնդելու, նորա միջակը բարեբերու և նորա համար զո՛ւ ըլլալու մէջ: Եթէ իր ընթացքը

չը բերել իսկ փառք միշտ պիտի հետեւի այդ ընթացքին:—Այդ ճանաչող իր կրօնը, կը հաւատայ անոր, և կը սիրէ դնալ: Բայց չէ կրօնասուր, կը կարգալ Torquemada յայտնադնէ: Քաջ ատուածաբան է և կը զարմացնէր նոյն իսկ Միլթոնիանց Հիւսթիսիան Եղեալը կալիպոսը: Քարոզիչ է, բառին բովանդակ նշանակութեամբ: Ցայտնուցում նաև քաղաքագետ անձ: Քաղաքագիտական փորձառութիւններ ունեցաւ, և այդ փորձառութիւններն արհամարհելի չեն հայոց կաթողիկոսին համար: Արտաքուստ պարզ է, բայց խորապէս ներքուստ: Շատ ճարտար կերպով կըրցած է ի գործ դնել Քրիստոսի պատուէրը, ազաւնի մը պէս միամիտ, ուրիշ մը պէս խորապէս: Շատ քո՛ւ ենք այդ խորապիտութիւնն: Ներքին սրբազան ևս շատ հեռի է արժանաւոր ըլլալէ: Մեր եկեղեցականաց այս առաքնութեանը մեծ կարեւորութիւն ընծայելու ենք: Մեր եկեղեցականաց արժանաւորութիւնը ինչ ազգաներ չը բերաւ մեր գլխուն: Չենք ուղեր երկար խօսել Ներքին սրբազանի այս առաքնութեանը վրայ: Անցեալ տարի այս նիւթին վրայ յատուկ նամակ մը գրած ենք և խօսած ենք ընդարձակօրէն:—Սակայն զրամական խնդրոյ մէջ Ներքին սրբազան աւելի առողջ սկզբունքներ ունի քան խրեմեան սրբազան և գիտէ դառն յարգը: Եթէ Ներքին սրբազան ընտրուի կաթողիկոս, երկիւղ չունինք թէ

խառնել էի «Մշակի» միջոցով հայ երկաթագործների դրութեան վերաբերութեամբ տեղեկութիւններ տալ ձեռք ընթերցողներին: Այժմ կը կամենայի նորից դառնալ այդ հարցին, ըստ որում մի տարում, գործնական առաջադիմութեան մէջ հայ արհեստագործները մի քանի քայլեր արած են:

Կարծես հայերը նոր հասկացած լինեն, առհասարակ, երկաթագործութեան արհեստի թէ կաթողիկոսներ և թէ նրա գերազանցութիւնը միւս ասիական արհեստներից: Հայը շատ անգամ նոր բանին ու հետաքրքրվող, ու սովորող է: Քանի կար միջոց որ հայը ազատ կարող էր մտնել մի որ և է գործարան տվորելու երկաթագործութեան արհեստներից միջը,—նա քնած էր: Տեսնելով ունի կամ օտարազգի երկաթագործ արհեստագործին սեւ, կեղտոտ շորերով գործից տուն դառնալիս, հայը զգում էր, միանգամայն չը հետաքրքրվելով թէ այդ կեղտոց գոյացած արդիւնքը որքանով մեծ էր, քան մի քանի ասիական մաքուր արհեստների արդիւնքը և այդ կեղտ օտանքի ընտանեկան դրութիւնը որքանով գերազանցում էր մաքուր արհեստագործների ընտանեկան դրութիւնից: Հայի աչքին աւելի մեծ նշանակութիւն ունի մի որ և է ասիական արհեստ, քան երկաթագործութիւնը:

Բայց, ինչպէս ամեն բանում, ժամանակի ընթացքին ենթարկվելով, մարդս վերջ է վերջոյ համոզվում է ճշմարտութեան մէջ, ենթարկվում է շօշափելի իրականութեան, որին գուցէ ինքն առաջ հաւածում էր, որպէս անիրագործելի, անհամակրելի: Նորութիւն,—այդուհեւ էլ հայերը թէև ուշ, յաղթվեցան իրականութեանից և այժմ երկաթագործութիւնն ապրած կեղտ օտ արհեստին այլ ևս բարձրից չեն նայում: Համարեա ամեն օր կը պատահէ, հայ երկաթագործներին երկաթագործարաններում տեղ փոխելով, թէև նոյն իսկ հիմա շատ դժուարութեամբ է տեղ ձարվում այդպիսիների համար, ընդհանուր գործերի անաջողութեան պատճառով:

Հայ արհեստագործների վերև ասած առաջադիմութիւնը նկատվում է ամեն մի գործարանում, ուր, ի հարկէ, կարելի է փոքր ի չափ բան ուղարկել: Կան և այնպիսի գործարաններ, ինչպէս, օրինակ, Նորէլիք, որ ոչ թէ միայն նոր բան սովորել անկարելի է, բայց մարդը իմացածն էլ կը մոռանայ, քանի որ այդտեղ միմիայն խոշոր վաճառքի պատրաստելով են գրադուր բոլոր բանւորները:

Բայց առհասարակ միջոցներ և թաղիկով գործարանը.

սին անոնք են ամենն ժամանակի դատարանները:—Գեղեցիկ սեւը որդիական արտաքին կարգին համակրութիւն կը տաւ: Ներքին սրբազանի համար: Ո՛չ միայն մեր տիկնայք այլ և օտարազգի կանայք կը պաշտեն զՆա: Այս բացատրութիւնը սուրբ մտքով է:—Գեւ մի քանի օր առաջ բարեազգութիւն ունէի տեսակցել մի հայ տիկնոջ հետ, որ շատ և շատ պարտաւոր է երախտապարտ ըլլալ առ ընտրութիւն, և որ սրտի աղնուութեան, հոգւոյ վնասմանութեան միացուցած է մտաւոր բարձր կրթութիւն մը, շատ անօրաբախտ գեղեցիկ տեսին մէջ: Ազնւ. տիկնոջ կը պատմէր այն խոր տպաւորութիւնը զոր կազմէ Ներքին սրբազանը գեղապանահայ և օտարազգի աղնուական տիկնանց: Ազնւ. տիկնոջ պատկանելով Պոլսոյ հայոց բարձր դասակարգին կրցած է ի մօտոյ տեղեկանալ գեղապանահայ և օտար աղնուական տիկնանց զգացումներուն Ներքին սրբազանի մասին:—«Չեմ կարող բացատրել, կըսէր, թէ ինչ սքանչելի անգամ, ինչ հիացմամբ կարտասանեն պատրիարքի անունը: Բայց մենք չենք տեսած կրան մեր երկիրներում մէջ մի այդպիսի եկեղեցական կարծես յարութիւն առած է քրիստոնէութեան նախնի դարերու հայրապետներին մին:—Եւ այս լեզուն անխտիր կը գործածեն ամենքն ալ, ինչ եկեղեցւոյ որ պատկանին:—Բայց մենք այս փափակ նիւթին վրայ շատ չընթանք:

կաթողիկոսական խնդրայ զուրկը չը
խօսենք հետաքրքրական կտորի մը վրայ: Բա-
կան հին է և հաւանօրէն ձեզ ծանօթ, բայց
մօթխմանիս ամբողջացնելու համար պէտք է
երբ կաթողիկոսական խնդիրը բացուեցաւ:
սիս չհրաւիրակեց պ. Ա. Արքիեպիսկոպոս
բարոյաբան մը յորդմով կըսէ թէ Ռուսիոյ
կաթողիկոսական երկու ընտրելի ունին: Օտ-
ն է Նիքան: Այս լուրը հետաքրքրութիւն պատ-
ռեց: Օտանը լաւ կը ճանչնանք. բաւական
երեւակայութիւն պէտք է զիս կաթողիկոսա-
ն: ընտրելի ցոյց տալու համար: Օտանի

Հայկակ

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час.; Лор.-Мелик. ул. каз. д.